# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
# ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

«3» մարտի 2022թ. N 77/Ա

ք. Ստեփանակերտ

### ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 31-ի N 69-Ա որոշմամբ հաստատված հավելված 1-ի 11-րդ կետի 4-րդ ենթակետը՝

### Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

Արցախի Հանրապետությունում գործող հասարակական կառույցների, նախաձեռնող խմբերի կողմից իրականացվող նպատակային երիտասարդական ծրագրերի ֆինանսավորման նպատակով՝

1. Ստեղծել փորձագիտական հանձնաժողով և հաստատել դրա կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել փորձագիտական հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. Հակոբյան

*Հավելված 1*
*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և*
*սպորտի նախարարի*
*«__3__» __[illegible]__ 20__ թ. N 77/Ա հրամանի*

ԿԱԶՄ

***ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ***

| | | |
|---|---|---|
| 1. | Լեռնիկ Հովհաննիսյան | - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ |
| 2. | Արևիկ Հովսեփյան | - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության երիտասարդության հարցերի բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար |
| 3. | Գայանե Գրիգորյան | - ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ |
| 4. | Էլեոնորա Ավանեսյան | - Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, հանձնաժողովի անդամ |
| 5. | Մետաքսե Հակոբյան | - Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, հանձնաժողովի անդամ |
| 6. | Վարուժան Առաքելյան | - ՀՀ նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության կազմակերպական բաժնի վարիչ, հանձնաժողովի անդամ |
| 7. | Իրինա Մանգասարյան | - Ծրագրերի փորձագետ, իրավաբան, հանձնաժողովի անդամ |
| 8. | Ջինա Գասյան | - ՀՀ մշակույթի և երիտասարդության պալատի տնօրեն, հանձնաժողովի անդամ |
| 9. | Վարդուհի Բաղդասարյան | - Արցախի հանրային ռադիոյի և հեռուստատեսության «Բացվող ծրարներ», «Ռադիոարվեստանոց», «Դարձ», «Դարձ՝ հոգու և ինքնության» հաղորդաշարերի խմբագիր, հանձնաժողովի անդամ |
| 10. | Անահիտ Թովմասյան | - Ծրագրերի փորձագետ, հանձնաժողովի անդամ |
| 11. | Հակոբ Իփճեան | - Արցախի Օժանդակութեան Մարմնի տնօրեն, հանձնաժողովի անդամ |

*Հավելված N2*
*ԱՀ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի*
*«3» հունիսի 20__թ. N474 հրամանի*

**Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության /այսուհետ՝ Նախարարություն/ երիտասարդական քաղաքականության իրականացմանն ուղղված և երիտասարդության հիմնախնդիրներով զբաղվող, Արցախի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց կողմից ներկայացված ծրագրերի փորձագիտություն անցկացվող հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ աշխատակարգը:
2. Հանձնաժողովը հասարակական հիմունքներով գործող խորհրդատվական մարմին է:
3. Հանձնաժողովը ստեղծվում և կազմը հաստատվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի /այսուհետ՝ Նախարար/ հրամանով:
4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերին և սույն աշխատակարգին համապատասխան:
5. Նախարարության աշխատակազմի տվյալ բնագավառի քաղաքականությունն իրականացնող ստորաբաժանումը՝ երիտասարդության հարցերի բաժինը, առաջադրում է հանձնաժողովի անդամության թեկնածուներ՝ ուսանողական, հասարակական և պետական կառույցներից:
6. Ի պաշտոնե հանձնաժողովի անդամներ են հանդիսանում ոլորտը համակարգող նախարարի տեղակալը (հանձնաժողովի նախագահ), աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության երիտասարդության հարցերի բաժնի վարիչը (հանձնաժողովի պատասխանատու քարտուղար):
7. Եթե հանձնաժողովի որևէ անդամի մասնակցությունը հանձնաժողովի հետագա աշխատանքներին դառնում է անհնար, ապա հանձնաժողովը կազմը համալրում է Նախարարի հրամանով:
8. Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնում է Հանձնաժողովի կազմը հաստատելու պահից ու դադարեցնում է դրանք՝ համաձայն սույն աշխատակարգի 17-րդ կետի:

## II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. ***Հանձնաժողովի խնդիրներն են՝***
   1) Արցախի Հանրապետության պետական բյուջեից երիտասարդական ծրագրերի իրականացման համար հատկացվող միջոցների առավել արդյունավետ և նպատակային օգտագործման ապահովումը.

## V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

*15. Հանձնաժողովի անդամը՝*

1) վարում է նիստերը հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ,
2) մասնակցում է հայտերի քննարկմանը և քվեարկությանը, ներկայացնում հայտերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ,
3) ծանոթանում է նիստերի արձանագրություններին,
4) իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

*16. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝*

1) արձանագրում է նիստերը և կազմում արձանագրություն,
2) ապահովում է կապը երիտասարդության վարչության և հանձնաժողովի անդամների միջև,
3) բացատրություն է տալիս հանձնաժողովի անդամներին քննարկման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ,
4) իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## VII. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆԸ

*17. Երիտասարդության հարցերի բաժինը՝*

1) Իրականացնում է իր գործառույթները ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության համաձայն,
2) Ապահովում են Նախարարություն մուտքագրված Հայտերի ընդունումը, որոնք գրանցվում և համարակալվում են երիտասարդության հարցերի բաժնի համապատասխան գրանցամատյանում,
3) Հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է հանձնաժողովի հերթական նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին,
4) Հերթական նիստից ոչ ուշ, քան 1 շաբաթ առաջ, ուսումնասիրված և պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերով համալրված հայտերը սահմանված կարգով ներկայացնում է հանձնաժողովին,
5) ապահովում է պատշաճ պայմաններ հանձնաժողովի աշխատանքների համար,
6) իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

*18. Հանձնաժողովը դադարեցնում է իր գործունեությունը Նախարարի հրամանով:*

2) Արցախի Հանրապետության «Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգում» ամրագրված պետական երիտասարդական քաղաքականության սկզբունքներից բխող և առաջնահերթություններ կայացնող ծրագրերի իրականացումը, հասարակական նախաձեռնությունների խրախուսումը.
3) Պետական երիտասարադական քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերի թափանցիկության ու հրապարակայնության ապահովումը:

***10. Հանձնաժողովը՝***

1) Երիտասարդության հարցերի բաժից ստանում է առաջիկա նիստին քննարկվելիք ծրագրերի և փաստաթղթերի փաթեթները (այսուհետ՝ Հայտեր),
2) Նիստի անցկացման օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ երիտասարդության բաժնին է ներկայացնում Հայտերի վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները,
3) Քննարկում է Հայտերը, կայացնում է որոշում՝ ներկայացված ծրագրերի աջակցության առաջնահերթության և դրանց ֆինանսավորման չափի վերաբերյալ,
4) Երիտասարդության հարցերի բաժնին է վերադարձնում ստացված Հայտերը,
5) Իրականացնում է օրենքով, սույն աշխատակարգով և սույն իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, ըստ անհրաժեշտության (ըստ հայտարարության ներկայացված ծրագրերի):
12. Հանձնաժողովի նիստերը իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքերում:
13. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների քվեարկության արդյունքում՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

## IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

***14. Հանձնաժողովի նախագահը՝***

1)ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները,
2)վարում է հանձնաժողովի նիստերը,
3)կազմակերպում է հայտերի քննարկման աշխատանքները,
4)իրականացնում է հայտերի քննարկման աշխատանքների հսկողությունը,
5)որոշում է նիստի հետ կապված հարցերը՝ այն համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ,
6)ստորագրում է հանձնաժողովի որոշումները,
7)իրականացնում է սույն որոշումները,
8)իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ: